

ԿԱՐԳ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է սույն կարգի 2-րդ կետում նշված լիցենզավորված անձանց կողմից ներդրումային գործունեության վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացման ընթացակարգը:
2. Տեղեկատվությունը ներկայացնում են հետևյալ լիցենզավորված անձինք (այսուհետ՝ Ընկերություններ)՝ սույն կարգի հավելվածով հաստատված ձևերի համապատասխան.
 - 1) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ №1, №2, №3 և №4 ձևերով,
 - 2) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը՝ №4 ձևով,
 - 3) «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ №4 ձևով,
 - 4) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը՝ №4 ձևով,
 - 5) «Արմփատեր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ №4 ձևով,
 - 6) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ №4 ձևով,

7) «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ N°4 ձևով,

8) «ԷֆԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ N°4 ձևով,

9) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ N°5 և N°6 ձևերով:

3. Տեղեկատվությունը ներկայացվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ՝ մինչև հաշվետու տարվա հունիսի 1-ը: Տեղեկատվությունը ներառում է ներդրումային գործունեության աճողական նկարագիրն առ հաշվետու տարվա մարտի 31-ը:
4. Ընկերությունը, Տեղեկատվությունն ուղեկցող գրությամբ Հանձնաժողով է ներկայացնում առձեռն, փոստային կամ էլեկտրոնային եղանակով:
5. Առձեռն կամ փոստային եղանակով ներկայացման դեպքում Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացվում նաև invest.report@psrc.am էլեկտրոնային հասցեին՝ սույն կարգի 7-րդ կետում նշված ֆորմատներով:
6. Էլեկտրոնային եղանակով Տեղեկատվությունը ներկայացվում է փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry) կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով Տեղեկատվությունը ներկայացվում է Հանձնաժողովի սահմանած կարգով:
7. Փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) Տեղեկատվությունը ներկայացվում է XLS (իքսէլս), XLSX (էքսէլսիքս) կամ ODS (օդիէս) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական unicode (յունիկոդ) տառատեսակով, իսկ այլ տվյալներ ներկայացնելու համար կիրառելի են DOC (դոկ), DOCX (դոկիքս) կամ PDF (փիդիէֆ) ֆորմատները:
8. Առձեռն եղանակով ներկայացման դեպքում Տեղեկատվությանը ներկայացման օր է համարվում Հանձնաժողովում Տեղեկատվության և ուղեկցող գրության փաստացի

մուտքագրման օրը, փոստային եղանակով ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը, փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) ներկայացման դեպքում՝ Տեղեկատվությանը և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը, իսկ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման դեպքում՝ այդ համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հաշվետվություններ ներկայացրած անձին հաշվետվությունների ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցման մեջ նշված օրը:

9. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվության սահմանված ձևերին անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում Ընկերությունը Հանձնաժողովի կողմից տեղեկացվում է այդ մասին և տեղեկացվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն կամ Տեղեկատվությանն առնչվող լրացուցիչ պարզաբանումներ:
10. Տեղեկատվության կազմման համար անհրաժեշտ սկզբնական հաշվառման փաստաթղթերում անորոշությունների, անճշտությունների և այլ վիճահարույց տվյալների առկայության, կամ տարբեր պատճառներով այդ փաստաթղթերի վավերացված չլինելու դեպքում Ընկերության սկզբնական հաշվառման առկա փաստաթղթերի կամ իր կողմից առավել արժանահավատ համարվող ցուցանիշների հիման վրա լրացնում և Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում Տեղեկատվությունը ներկայացնում է Հանձնաժողով, իսկ հետագայում նոր հիմնավոր փաստերի առկայության կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերում փոփոխությունների կատարման դեպքում Տեղեկատվության մեջ կատարում է փոփոխություններ և Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն:
11. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվության մեջ Ընկերության կողմից սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում ևս վերջինս կարող է ներկայացնել ճշգրտված

Տեղեկատվություն: Սույն կարգի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի Տեղեկատվություններից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված, իսկ մյուսները՝ ճշգրտված: